Այբ
դպրոց

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2017 2018



# 2017-2018

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

www.aybschool.am

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


4 ՏԱՐԻՆ՝ ԳՈՐԾԵՐՈՎ

6 ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

8 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Կրթական ծրագիր. Արարատյան բակալավրիատի սկզբունքները

12 ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

14 «ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ. ՄԻՋԱՎԱՅՐ, ՄԱՐԴԻԿ
· Աշակերտներ
· Ծնողներ
· Շրջանավարտներ
· Հոգաբարձուների խորհուրդ
· Ուսուցիչներ և անձնակազմ

28 ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ
· Իրադարձությունններ
· Հանդիպումներ
· Նվաճումներ
· Կարևոր փաստեր
· Վիճակագրություն

35 ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

36 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

38 ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ ԴՊՐՈՑԻՆ

40 ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

# Տարին՝ գործերով



**Արամ Փախչանյան**
«Այբ» դպրոցի տնօրեն

Մեր երկիրն այս տարի թևակոխեց նոր և ակնկալիքներով լի շրջան: Վերջապես մենք հիմք ունենք հավատալու, որ համատեղ ուժերով կկառուցենք մեր երազած Հայաստանը, ուր չեն լինի մենիշխանություն, կոռուպցիա, անարդարություն և աղքատություն, ուր մարդիկ կլինեն ազատ և երջանիկ:

«Այբ» դպրոցը ստեղծվել է ձևավորելու համար սերունդներ, որոնց համար հենց այդ միջավայրն է բնական և հոգեհարազատ: Պահպանելով ներքին մաքրությունը և ազատությունը, աջակցելով անկախ մտածողությանը, կարևորելով արժեքները և դրանց մարմնավորումն իրական կյանքում մենք ստեղծել ենք մի եզակի միջավայր, ուր մարդիկ երջանիկ են, քանի որ ամեն օր առնչվում են մեր վառ ապագայի հետ, ապրում այդ ապագայում:

Մինչ այս պարբերությունը ես չառանձնացրի աշակերտներին: «Այբ» դպրոցում չկան կանոններ միայն աշակերտների համար, չկա տարիքային կամ ցանկացած այլ տեսակի խտրականություն: Մենք մի համայնք ենք, ուր բոլորս համախմբված ենք մի գաղափարի շուրջ, և ամեն մեկն ունի իր դերակատարումը: Առաջնայինը գաղափարն է, դերակատարումը կարող է ճկուն լինել և տարեցտարի փոփոխության ենթարկվել: Մեր երեկվա շրջանավարտներն այսօր մեր աշխատակիցներն են, մեր այսօրվա աշակերտներն իրականացնում են բարդ նախագծեր, որոնք պահանջում են լուրջ մասնագիտական պատրաստություն և ինքնակազմակերպման բարձր մակարդակ, ինչը հազվագյուտ ես ակնկալում դեռահասներից: Սակայն եթե կա միջավայր, ուր նման փորձը սովորական է դարձել, ապա տապալվում են մտավոր խոչընդոտները և ձևավորվում են նոր, ոգևորիչ իրողություններ: Դրանք բերում են իրենց հետ ապագայի շունչ, որը պիտի լինի ցանկացած դպրոցում, ուր երիտասարդներին պատրաստում են ապագայում ապրելու համար:

Մեր ներկան շատ ավելի փոփոխական է, քան նախկինում, և դրա հետևանքով մարդկության ապագան գնալով ավելի անորոշ է դառնում: Դա, իր հերթին, համակարգային ճգնաժամ է հարուցել կրթության ոլորտում: Հանրակրթությունը կանգնած է նոր իրողությանը և անընդհատ փոփոխվող հասարակական պատվերին համապատասխանելու խնդրի առջև: Դրա համար փորձարկվում և ներդրվում են տարատեսակ մոտեցումներ: «Այբ» դպրոցն անընդհատ բաց է փոփոխությունների նկատմամբ, պատրաստ է փոխվելու և փոխվում է, որպեսզի է՛լ ավելի լավ ծառայի իր առաքելությանը: Սակայն մի բան մնում է անփոփոխ, և այդ մի բանն է դրված «Այբ» դպրոցի հիմքում: Մարդու ճանապարհը կյանքում պայմանավորվում է առաջին հերթին իր մարդկային հատկանիշներով, արժեհամակարգով, ներքին տոկունությամբ և պատասխանատվությամբ: Մենք համարում ենք, որ դպրոցի կարևորագույն նպատակը երեխայի մեջ հիմնարար առաքինություններն ամրապնդելն է, իսկ մնացածը՝ բարձր կրթական արդյունքները, հաջողությունները, հետևանք են և ոչ թե ինքնանպատակ:

Անցած տարին «Այբ» դպրոցի համար դարձավ մեծ փոփոխությունների մեկնարկի տարի: Մենք վերանայեցինք դպրոցի կառավարման համակարգը, կառավարման տարբեր օղակների գործառույթները, սկսվեց դպրոցի նոր ռազմավարության ձևավորումը, որով նոր նպատակներ դրվեցին դպրոցի առջև: Եկող ուսումնական տարվա ընթացքում մենք բազմաթիվ գաղափարներ կիրականացնենք, որոնք է՛լ ավելի առաջ կտանեն մեզ զարգացման ճանապարհով: Այս ամենը շատ ոգևորիչ է, քանի որ խոսում է այն մասին, որ «Այբ» դպրոցը շարունակում է մնալ երիտասարդ ու կենսունակ և շարունակում հավակնել նրան, որ ճանաչվի աշխարհի լավագույն դպրոցներից մեկը:

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը սովորելու նոր միջավայր է, ուր ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ նպաստելով հայկական կրթության մրցունակության բարձրացմանը: «Այբ» դպրոցի նպատակն է դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի մոդել, առաքելությունը՝ ձևավորել ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ:

«Այբ» դպրոցը ծառայում է որպես յուրօրինակ լաբորատորիա՝ դասավանդման ու ուսումնառության լավագույն տեխնոլոգիաների, մեթոդաբանության ու փորձառության մշակման և կրթական համակարգերի ստեղծման համար, որոնք հավակնում են տարածվել երկրի ամբողջ կրթական համակարգի վրա:

«Այբ» դպրոցը բացվել է 2011 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ կրթության գաղափարի շուրջ միավորված հարյուրավոր բարերարների ֆինանսական աջակցությամբ: «Այբ» դպրոցը կարգավիճակով հիմնադրամ է (պաշտոնական անունը՝ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ) և հասարակական կառույց: Դպրոցը ղեկավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, չունի սեփականատերեր ու բաժնետերեր:

«Այբ» ավագ դպրոցը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների ավելի քան 70%-ն ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում):



# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Արարատյան բակալավրիատ և սկզբունքներ

«Այբ» դպրոցը 12-ամյա է՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) բաղադրիչներով: «Այբ» դպրոցում դասավանդումը կատարվում է «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայկական կրթական ծրագրով՝ մշակված «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ ուսումնական ծրագիր է, որի շնորհիվ հայ երեխաները, սովորելով հայկական դպրոցներում, հայերենով, ստանում են միջազգային բոլոր խստապահանջ չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն: ԱԲ-ի ավարտական հավաստագիրն ընդունելի ու ճանաչելի է թե՛ տեղական, թե՛ միջազգային բուհերի կողմից:

Արարատյան բակալավրիատի փիլիսոփայությունը խարսխված է ութ սկզբունքների վրա, որոնք արտահայտում են ԱԲ-ի դպրոցների ինքնությունը և ապահովում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետություն, մարդկային փոխհարաբերությունների ներդաշնակություն, սովորելու առողջ միջավայր և համայնքաշինական արժեքների սերմանում:



ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

## Ա. ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-ն ամբողջական կրթության ծրագիր է: ԱԲ-ի նպատակը համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ և առողջ անհատների ձևավորումն է:

## Բ. ԽՈՐԱՑՈՒՄ

ԱԲ-ն ընձեռում է յուրաքանչյուր առարկա խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն՝ առանց խախտելու կրթության համակողմանիության սկզբունքը:

## Գ. ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: ԱԲ-ը ձևավորում է այնպիսի միջավայրեր, ուր սովորողները ճանաչելով ստեղծում են և ստեղծելով ճանաչում՝ ներգրավվելով տարբեր առարկայական և միջառարկայական ծրագրերում:

## Դ. ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՐՎԵՍՏ

ԱԲ-ի կրթական միջավայրն իր կրթական ռեսուրսներով, խորհրդատվական համակարգով, տեխնոլոգիական լուծումներով նպաստում և տրամադրում է աշխատանքի, ակտիվության և արդյունավետության:

«Այբ» դպրոցի փիլիսոփայությունն ամփոփված է դպրոցի նշանաբանի մեջ՝ «Իմա և արա», գրաբարից թարգմանաբար՝ «Հասկացի՛ր և արա՛»: Այս երկու սկզբունքները խորապես փոխկապակցված են, այսինքն՝ չկա ճանաչողություն առանց իրագործման, ոչ էլ արարում՝ առանց իմացական ձեռքբերման: Այս երկուսի համադրությունը մեր կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է:



## Ե. Արժեքներ

ԱԲ-ն արժեքներ գնահատող և սերմանող ծրագիր է: ԱԲ-ի նպատակն է՝ ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև բարոյապես մաքուր, սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի:

## Զ. Համայնք

ԱԲ-ը համայնքաշինական առաքելություն է: ԱԲ-ի ամենամեծ հարստություններից մեկը նրա շուրջ համախմբված մարդիկ են: ԱԲ-ը միավորում է կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու ցանկություն ունեցող մարդկանց, ովքեր պատրաստ են պատասխանատվություն ստանձնելու՝ տալու նոր սերնդին կրթությամբ իրագործվելու հնարավորություն:

## Է. Միջավայր

ԱԲ-ը ձգտում է ստեղծելու այնպիսի գաղափարական, ժամանակակից և հագեցած միջավայրեր, որոնք համակում են ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու և արարելու:

## Ը. Գնահատանք

ԱԲ-ի դպրոցն արժևորման, հարգանքի և շնորհակալության միջավայր է:

# «ԱՅԲ» ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ | ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ | ԱՎԱԳ ԴՊՐՈՑ |
|---|---|---|---|
| Հայագիտական առարկաներ | Մայրենի խոսքի մշակույթ | Հայոց լեզու<br>Գրականություն<br>Մայրենի | Հայոց լեզու<br>Գրականություն |
| Օտար լեզուներ | Անգլերեն<br>Ռուսերեն | Անգլերեն<br>Ռուսերեն<br>Ֆրանսերեն<br>Իսպաներեն<br>Գերմաներեն | Անգլերեն<br>Ռուսերեն<br>Ֆրանսերեն<br>Իսպաներեն<br>Գերմաներեն |
| Ճշգրիտ գիտություններ | Մաթեմատիկա<br>Համակարգչային գիտություն | Հանրահաշիվ<br>Երկրաչափություն<br>Մաթեմատիկա (5-րդ և 6-րդ դասարաններ)<br>ՏՀՏ<br>Ինֆորմատիկա | Հանրահաշիվ<br>Երկրաչափություն<br>ՏՀՏ |
| Բնագիտական առարկաներ | Գիտություն | Կենսաբանություն<br>Քիմիա<br>Ֆիզիկա<br>Աշխարհագրություն<br>Բնագիտություն | Կենսաբանություն<br>Քիմիա<br>Ֆիզիկա<br>Աշխարհագրություն |
| Հասարակա-գիտական առարկաներ | | Հայոց պատմություն<br>Համաշխարհային պատմություն | Հայոց պատմություն<br>Համաշխարհային պատմություն<br>Գործարարություն<br>Հասարակագիտություն<br>Մտածելու հմտություններ |
| Արվեստներ | Կերպարվեստ<br>Երաժշտություն<br>Պարարվեստ | Պար<br>Երաժշտություն<br>Գծագրություն<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Բեմարվեստ<br>Երգչախումբ | Պար<br>Ռազմապար<br>Գծագրություն<br>Գրաֆիկական դիզայն<br>Նկարչություն<br>Նվագախումբ<br>Բեմարվեստ<br>Տղաների երգչախումբ<br>Աղջիկների երգչախումբ |
| Ֆիզիկական պատրաստություն | Մարմնակրթություն | Մարմնակրթություն | Մարմնակրթություն<br>Բասկետբոլ (խմբակ)<br>Լող (խմբակ) |
| Խմբակներ և նախագծային ուսումնառություն | Շախմատ<br>Ռուսերենի խմբակ<br>Անգլերենի խմբակ<br>Ֆրանսերենի խմբակ<br>Խոսակցական ֆրանսերենի խմբակ<br>Զարգացնող խաղեր<br>Պարի խմբակ<br>Թատրոնի անգլերեն խմբակ<br>Ռոբոտիկայի խմբակ<br>«Հմուտ ձեռքեր» խմբակ<br>Սեղանի խաղերի խմբակ<br>Սպորտային խաղերի խմբակ<br>Լող<br>Դասապատրաստում | ՆԶՊ և առաջին բուժօգնություն<br>Շախմատ<br>Խոսակցական ֆրանսերենի խմբակ<br>Մեդիա ակումբ<br>Ռոբոտիկայի խմբակ<br>Գիտության խմբակ<br>Մյուզիքլ / բեմի ձևավորում / թատերախումբ / պարարվեստ / երգչախումբ<br>Սպորտային խաղերի խմբակ<br>Լող<br>Բասկետբոլ<br>Դասապատրաստում | «Գիտալաբ» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)<br>«Կանաչ քիմիա» (քիմիա)<br>«Ինժեներական ակումբ» (ռոբոտաշինություն)<br>«Տեխնոշարժ» (ծրագրավորում)<br>F8 (լուսանկարչություն)<br>«Արվեստանոց» (կերպարվեստ)<br>«Ռոքեստր» (նվագախումբ)<br>Film Factory (ֆիլմարտադրություն)<br>«Ներդրողների ակումբ» (բիզնես խորհրդատվություն) |

* «Այբ» ավագ դպրոցում մի շարք առարկաներ դասավանդվում են ստանդարտ և խորացված մակարդակներով:



# Սովորել գործելով

## Նախագծային ուսումնառություն

ԱԲ-ի առարկայացանկի տարբերակիչներից է նախագծային ուսումնառությունը (project-based learning), որն «Այբ» դպրոցում 2015 թ. ներդրված նորարարական կրթական մոդել է՝ հիմնված «սովորել գործելով» սկզբունքի վրա: Այն կառուցում է ուսումնառությունը նախագծերի շուրջ: Այս ծրագրի շրջանակում աշակերտները կազմում են թիմեր և իրականացնում մեծածավալ երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը: Նախագծերի իրականացման արդյունքում զարգանում են աշակերտների մի շարք կարևորագույն հմտություններ, ինչպիսին են թիմային աշխատանքը, բիզնես մտածելակերպը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, առաջնահերթությունների որոշումը և այլն: Նախագծային ուսումնառության շնորհիվ աշակերտները, փորձելով սեփական ուժերն այս կամ այն ոլորտում, հաճախ կողմնորոշվում են նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում:



**Նախագծային ուսումնառության շրջանակում «Այբ» դպրոցում գործում են 9 թեմատիկ ակումբներ՝**

- «Գիտալաբ» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն),
- «Կանաչ քիմիա» (քիմիա),
- «Ինժեներական ակումբ» (ռոբոտաշինություն),
- «Տեխնոշարժ» (ծրագրավորում),
- F8 (լուսանկարչություն),
- «Արվեստանոց» (կերպարվեստ),
- «Ռոքեստր» (նվագախումբ),
- Film Factory (ֆիլմարտադրություն),
- «Ներդրողների ակումբ» (բիզնես խորհրդատվություն):

# «ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ

## միջավայր

11/11 Թբիլիսյան խճուղի



«Այբ» կրթական հանգույցը զբաղեցնում է 6,95 հա տարածք Երևանի Արաբկիր համայնքի Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում: Այսօր դպրոցն ունի չորս մասնաշենք՝ ընդհանուր 8300 քմ ուսումնական մակերեսով, և զինված ու համալրված է ժամանակակից ուսումնական տեխնոլոգիաներով, ռոբոտիկայի, քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներով, արվեստանոց-լաբորատորիայով, սպորտդահլիճով և համերգային դահլիճով: Ամբողջ «Այբ» կրթական ավանը նախատեսված է 800 աշակերտի համար:

«Այբ» կրթական հանգույցի ճարտարապետական յուրօրինակ լուծումները հայ ճարտարապետների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ու Հարվարդի համալսարանի առաջատար մասնագետների ու գիտնականների համատեղ աշխատանքի արդյունք են: Ճարտարապետական նախագծում հաշվի են առնվել դպրոցաշինության ժամանակակից զարգացումները և համաշխարհային փորձառությունը: «Այբ» կրթական հանգույցը դառնալու է յուրատեսակ կրթական ավան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ դպրոց, ֆաբլաբ, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ և այլն: Դպրոցում սովորում է 401 աշակերտ (2017 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ), որոնց թվում են ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի (ընդհանուր թվի մոտ 10%-ը) քաղաքացիներ:

8300 քմ

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆ

401 աշակերտ



մարդիկ

# «ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ

«Այբ»-ի՝ կրթությամբ վերափոխվելու գաղափարը համախմբել է այնպիսի մարդկանց, որոնք կյանքում կայացել են կրթության շնորհիվ և իրենց ժամանակը, ֆինանսական միջոցներն ու հեղինակությունը ներդնում են հայկական կրթության զարգացման գործում: Այն, ինչ երեկ երազանք էր թվում, այսօր իրականություն է շնորհիվ այս մարդկանց ստեղծարար հավատի ու համագործակցության: «Այբ» դպրոցը, որը երկրի կրթական նորագույն զարգացումների ուղենիշ է, կյանքի է կոչվել բազմաթիվ գաղափարակիցների, բարերարների ու աջակիցների վստահության ու պտղաբեր ջանքերի շնորհիվ:

10% արտերկրի քաղաքացիներ

# «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը երկու տարի է: Հխ-ում ներգրավված են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ հասարակական ու մասնագիտական ոլորտների հայտնի ներկայացուցիչներ:



բարձրագույն **ղեկավար** մարմին



**Մեսրոպ քհն. Արամյան**

նախագահ, կրթական և դրամահայթայթային հանձնախմբեր, Հայաստան



**Դավիթ Սահակյան**

ֆինանսական հանձնախումբ, Հայաստան



**Վազգեն Յակուբյան**

դրամահայթայթային հանձնախումբ, Հայաստան



**Անահիտ Ադամյան**

կրթական, ֆինանսական և դրամահայթայթային հանձնախմբեր, Ռուսաստան/Հայաստան



**Լուսինե Գալաջյան**



**Սարգիս Բադալյան**



**Արթուր Ալավերդյան**

# Ուսուցիչներ

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄ

«Այբ» դպրոցն ունի ավելի քան 210 աշխատակից (ադմինիստրատիվ անձնակազմ, ուսուցիչներ), որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է «Այբ»-ի նաև այլ կառույցներում՝ «Այբ» կրթական հիմնադրամում և Դիլիջանի կենտրոնական դպրոցում:

«Այբ»-ի հաջողության գրավականն են մեր ուսուցիչները: Անհնար է պատկերացնել որակյալ կրթական միջավայրն առանց բարձրակարգ մասնագետների: Մենք ուրախ ենք, որ 21-րդ դարի հայկական կրթական միջավայր կերտելու մեր կոչին միացել են բազմաթիվ հայտնի մասնագետներ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից: «Այբ» դպրոցի ուսուցչական կազմը համալրելիս մենք մեր առջև խնդիր ենք դրել դպրոց բերել մարդկանց, ովքեր հասարակական կարևոր ոլորտների ու հաստատությունների լավագույն մասնագետներ են և կարող են ոչ միայն իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել աշակերտին, այլև օրինակ դառնալ նրա համար, վառել նրա մեջ ուսման հանդեպ կրակը, սովորեցնել նրան սիրել առարկաները:

Կրթական հանգույցի ստեղծագործական ծրագրերում ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ գիտնականներ, արվեստագետներ, գործարարներ՝ ապահովելով դպրոցի կապը կյանքի և տեխնոլոգիաների նորագույն զարգացումների հետ:





## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ




## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ



# Աշակերտներ



Դարերի ընթացքում աշխարհի քաղաքակրթություններում և մշակույթներում ձևավորվել են մարդկային արժեքների որոշակի պատկերացումներ, և շատ հաճախ մարդը սահմանվել է որպես որոշակի առաքինությունների կամ բարոյական չափանիշների կրիչ: Բոլոր ժամանակներում կրթության հիմնախնդիրներից մեկը եղել և մնում է սովորողի արժեքային և որակական նկարագրի կերտումն ըստ տվյալ հասարակության ինքնության, բարոյական չափանիշների և ապագայի տեսլականի:

Դպրոցը՝ որպես մարդու կերտման ու ձևավորման գլխավոր օջախ, ստեղծվում է ոչ թե տնօրենի կամ ուսուցիչների կողմից, այլ համայնքի, իսկ աշակերտն այդ համայնքի գլխավոր դերակատարն է: Աշակերտի ներդրումը դպրոցաշինության ու համայնքաշինության մեջ նույնքան կարևոր է: Դպրոցի կենտրոնում գտնվում է մարդը՝ աշակերտը՝ իր տեսակով, իր ուրույն նկարագրով, և նրա շուրջ է տարվում ամբողջ աշխատանքը: «Այբ»-ի միջավայրը, որն ապահովում է դպրոցի բոլոր հաջողությունները, ստեղծում են աշակերտները՝ ուսուցիչների, դպրոցի ղեկավարների, հոգաբարձության հետ համատեղ: Աշակերտներն այստեղ ամբողջապես հավասար և լիարժեք համահեղինակ են այն ամենի, ինչ կատարվում է դպրոցում: Մեր աշակերտի տեսակն առաջին հերթին իր մեջ պարփակում է մարդկային գլխավոր առաքինությունները:

«Այբ»-ը նպատակ է դրել առաջին հերթին օգնելու աշակերտին, որ վերջինս կայանա որպես առաքինություններով ու արժեքներով օժտված լիարժեք անձ՝ մարդ, որը ձգտում է ճանաչելու, համագործակցելու, արարելու, մարդ, որը մտածող է և ստեղծագործող: Եվ եթե մենք առաջնորդվում ենք մարդակերտման այս սկզբունքով, ապա ստանում ենք ներդաշնակ արդյունք՝ և՛ անձնավորություն, և՛ գիտելիքներ:

ԱԲ-ի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները հիմնված են հին հունական փիլիսոփայությունից եկած և քրիստոնեության մեջ ամրագրված չորս մարդկային առաքինությունների վրա, որոնք են խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը: Յուրաքանչյուր առաքինություն մենք բացել ենք իր տեսական-ճանաչողական և գործնական-վարքային իմաստներով՝ ստանալով չորս զույգ կամ ութ սկզբունք: «Այբ» դպրոցի ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, մշակվել է այնպիսի անհատների սերունդներ կերտելու տեսլականով, որոնց բնորոշ են հետևյալ հատկանիշները:

**1. Ճանաչող և ստեղծարար:** Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը ԱԲ-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է: Ճանաչողությունն ամրապնդվում է փորձառությամբ և պտղաբերում ստեղծագործումով: Իսկ յուրաքանչյուր գործ իմաստավորվում և ամբողջանում է այդ գործից ծնված փորձառական գիտելիքով: ԱԲ-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

**2. Նախաձեռնող և հավասարակշռված:** Նախաձեռնողը նա է, ով ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն՝ սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Սակայն յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղություն և ցուցաբերելով զսպվածություն: Շրջահայաց նախաձեռնողն անխոհեմ առաջ չի նետվում, այլ պատասխանատվությամբ ծրագրում ու խորհում է, հաշվի առնում ծրագրի բոլոր գործոնները և կողմերը, մարդկանց իր գաղափարի շուրջ հավաքում, մարդկանց ծառայում և առաջնորդում:

**3. Զգոն և բաց:** Զգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև՝ ներքնապես ուշադիր և հավաքված: Մարդկային կյանքը ցրված է մտքերի, հիշողությունների, զգացմունքների, ապրումների մեջ, և կրթության բոլոր ժամանակների գերխնդիրն է՝ սովորեցնել մարդուն հավաքվել, ուշադիր լինել և կենտրոնանալ: Բաց մարդը զերծ է ներքին կապանքներից և սևեռումներից, հաղորդակից է մարդկանց և ունի իրականության զգացողություն: ԱԲ-ի աշակերտը չի առաջնորդվում սոսկ սեփական հետաքրքրություններով և ցանկություններով, այլ բաց է՝ ունեցածը կիսելու և ուրիշներից իրեն տրված բարիքը շնորհակալությամբ ընդունելու:

**4. Բարեխոհ և հոգատար:** ԱԲ-ի աշակերտը ոչ թե պետք է ձգտի պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն են: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերի մեջ. ԱԲ-ի աշակերտը պետք է լինի հոգատար: Հոգատար է նա, ով սեր ունի իր մեջ, փորձում է մարդկանց համար բարիք գործել, պատասխանատու է և անտարբեր չի անցնում իրողությունների կողքով: Բարեխոհությունն ու հոգատարությունը բարոյական լրացումն են «ճանաչող և ստեղծարար» հատկանիշների և շեշտում են, թե ինչ տեսակի ճանաչողությունն ու գործերն են օգտակար:

# «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

**Ընդհանուր քանակ՝ 401**

**Տարրական դպրոց՝ 140 աշակերտ, 35%**
**Միջին դպրոց՝ 101 աշակերտ, 25%**
**Ավագ դպրոց՝ 160 աշակերտ, 40%**

**Աշակերտների բաշխվածությունն ըստ սեռի**




**Աշակերտների բաշխվածությունն ըստ երկրների**






## Ծնողներ



Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Մենք դիտում ենք ծնողին որպես երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակցի: «Այբ» դպրոցն ակտիվորեն ներգրավում է ծնողներին երեխաների հետ աշխատանքում, մշակվել ու հաջողությամբ գործարկվում են հետաքրքիր ձևաչափեր, որոնց շնորհիվ դպրոց-ծնող համագործակցությունը տալիս է բարձր արդյունքներ: Օրինակ՝ սովորական «ծնողական ժողով» ասվածը «Այբ» դպրոցում անցկացվում է անհատական ծնող - երեխա - ուսուցիչ հանդիպման ձևաչափով. ոչ միայն քննարկվում են երեխայի հետ կապված հարցեր, այլև նախանշվում ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին: Ամսական թեյախմությունների ձևաչափով քննարկումներն ընթացիկ և կարևոր հարցերի շուրջ պաշտոնական խորհրդակցություն են, որում բարձրացված հարցերն ու դրանց հետքերով կայացված որոշումներն ու դրանց արդյունքները արձանագրվում ու տեղեկացվում են ծնողներին: Այս հարթակների ու ծնողի հետ անհատական շփումների շնորհիվ ձևավորվել է ծնող-դպրոց համագործակցության արդյունավետ մշակույթ: Գնահատելի է նաև, որ ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով, անհատապես կամ խմբով, աջակցում են դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը:

Ծնողները ներհամայնքային միջոցառումների կազմակերպման ակտիվ մասնակից են. նրանք նույնպես երբեմն հանդես են գալիս կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով: Դպրոցում խթանվում ու քարոզվում են բարեգործությունն ու փոխօգնության մշակույթը, և ծնողներն իրենց օրինակով և կազմակերպած բարի գործերով լավագույն օրինակն են երեխաների համար:

Եվ, վերջապես, մեծ ուրախություն է մեր ծնողներին տեսնել «Այբ» դպրոցի բարերարների թվում, ովքեր կարևոր ու շատ գնահատելի ֆինանսական ներդրում են ունեցել ու շարունակում ունենալ «Այբ» դպրոցի ընդլայնման ու համալրման գործում՝ այդպիսով նպաստելով ոչ միայն սեփական երեխայի, այլև նրանից հետո դպրոց եկող սերունդների համար ուսումնական լավագույն պայմանների ապահովմանը:

# Շրջանավարտներ

Դպրոցի վեցամյա պատմության ընթացքում «Այբ»-ը տվել է 259 շրջանավարտ (2018 թ. հուլիսի դրությամբ): Այսօր նրանք սովորում են Հայաստանի և արտերկրի հեղինակավոր բուհերում՝ բարձր պահելով դպրոցի անունը և «Այբ»-ի շրջանավարտի պատվավոր կոչումը: «Այբ»-ի շրջանավարտները դպրոցն ավարտելուց հետո շարունակում են ակտիվ մասնակցել «Այբ» համայնքի կյանքին՝ ընդգրկվելով «Այբ»-ի շրջանավարտների ակումբում, մասնակցելով դպրոցի և հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք նախաձեռնությունների, ինչպես նաև համալրելով «Այբ»-ի կառույցների անձնակազմի շարքերը:




«Այբ»-ի շրջանավարտների ակումբի հիմնական նպատակը շրջանավարտների համայնքի կայացմանն ու «Այբ»-ի հետ նրանց կապի պահպանմանը նպաստելն է և նրանց ներուժի դրսևորման ու զարգացման համար պարարտ հող ստեղծելը: Շրջանավարտների ակումբի կողմից իրականացվող ծրագրերն ուղղված են ընկերական մենտորության համակարգի զարգացմանը, ուսումնական գործընթացում ուսուցիչների և աշակերտների աջակցությանը, ինչպես նաև այլ հետաքրքիր միջոցառումների անցկացմանը:

Ակումբի գործունեության շրջանակում մեր շրջանավարտները հանդես են գալիս տարբեր նախաձեռնություններով: Այսպես՝ 2013-ին շրջանավարտներն իրականացրել են «Հավես ամառ» և «Հավես աշուն» ուսումնական նախագծերը, իսկ 2016-ին և 2017-ին շրջանավարտների ակումբը կազմակերպել էր «Այբ»-ի ամանորյա ավանդական տոնավաճառը: Ակումբի գործունեության մեկ այլ օրինակ էր «Այբֆեստ» միջոցառումը, որի նպատակը շրջանավարտներին ու ներկայիս աշակերտներին համախմբելն էր: Բացի այս ամենից՝ «Այբ»-ի շրջանավարտները հաճախ փորձի և գիտելիքի փոխանակման հանդիպումներ են ունենում դպրոցի աշակերտների հետ:

Մեր շրջանավարտները դպրոցի կենսունակության անբաժան և ամենակարևոր մասնիկներից մեկն են: Շրջանավարտների զգալի մասը դեռևս ներգրավված է դպրոցի ակտիվ կյանքում: Նրանք պարբերաբար հանդիպում են ավագ դպրոցի աշակերտների հետ, հաղորդակից դարձնում իրենց փորձին և օգտակար խորհուրդներ տալիս:

Շրջանավարտներից ոմանք դարձել են «Այբ»-ի աշխատակիցներ՝ համալրելով ադմինիստրացիայի, Ազգային երգ ու պարի ակադեմիայի, դպրոցական մրցույթների և SS թիմի շարքերը: Նրանք կամավորական սկզբունքով պարբերաբար ընդգրկվում են «Այբ»- ի տարբեր



կառույցներում իրականացվող նախագծերում, ինչպես նաև մասնակցում պրակտիկայի առաջարկվող ծրագրերին: «Այբ»-ի ապագայի տեսլականի վառ ապացույցը շրջանավարտներն են, որոնք դեռ նոր են ծիլեր նետել մեր հասարակությունում և նոր են սկսում ծաղկել՝ վարակելով շրջապատին իրենց արժեհամակարգով և ապագայի նկատմամբ հստակ պատկերացումներով ու ձգտումներով:

կյանքը

# Դպրոցի կյանքը 2017–2018 ուսումնական տարում

«Այբ» դպրոցի առօրյան լեցուն է ոչ միայն դասապրոցեսով, այլև մի շարք մշակութային, մարզական, կրթական, ժամանցային և այլ միջոցառումներով, հանդիպումներով, մրցույթներով և այլ կարևոր իրադարձություններով:






## Իրադարձություններ

«Այբ» կրթական հիմնադրամը մասնակցում է **Հայաստան-սփյուռք** համահայկական 6-րդ համաժողովի շրջանակում կայացած ցուցահանդեսին: Երկօրյա ցուցահանդեսի ընթացքում «Այբ» կրթական հիմնադրամի տասնամյա գործունեությանը ծանոթանում են բազմաթիվ հայեր աշխարհի գրեթե բոլոր ծայրերից՝ Ավստրալիայից մինչև Կանադա:

«Այբ»-ում կայանում են **5-րդ Այբական խաղերը:** Համայնքի աշակերտները, ծնողները, ուսուցիչները, բարերարները և բազմաթիվ հյուրեր համախմբվել էին մեկ հարկի տակ՝ մրցույթներում իրենց ուժերը փորձելու և հաճելի ժամանակ անցկացնելու համար:

Այբեցիները Եռաբլուրում մասնակցում են Armenia Tree Project-ի **«Համայնքային ծառատունկին»:** Այդ օրը տնկվում է ավելի քան 2000 ծառ և թուփ:

«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան»-ի և «Այբ» դպրոցի նախաձեռնությամբ տեղի է ունենում **«Ծրագրավորման ժամ»** (Hour of Code) միջոցառումը, որը Երևանում կազմակերպվում է արդեն 4-րդ անգամ: Միջոցառմանը մասնակցում է 300-ից ավելի դպրոցական Հայաստանի տարբեր համայնքներից:



Տեղի է ունենում «Այբ» համայնքի ամենամյա բարեգործական տոնավաճառ-ցուցահանդեսը: «Այբ»-ի շրջանավարտների կազմակերպած տոնավաճառի արդյունքում գոյացած ողջ գումարը՝ **1.493.490 ՀՀ դրամ,** հատկացվում է «Այբ» դպրոցի Գ մասնաշենքի անհատական պահարանների ձեռքբերմանը:

Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF-Հայաստան) «Այբ» դպրոցի և «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հետ միասին Հայաստանում առաջին անգամ իրականացնում է **«Պատանի ռենջերների ծրագիր»** կրթական նախաձեռնությունը: «Այբ» դպրոցի աշակերտներն իրականացնում են ծրագրեր, որոնք նպաստում են պահպանվող տարածքի էկոտուրիզմի զարգացմանը, վայրի բնության մշտադիտարկմանը, բնապահպանական տեղեկացվածության ու կրթական մակարդակի բարձրացմանը:

Ազգային երգ ու պարի ակադեմիայի ներկայացուցիչները «Կարին» ավանդական երգի-պարի խմբի և «Այբ» դպրոցի աշակերտների, այդ թվում՝ «Այբար» պարախմբի հետ միասին այցելում են Դիլիջանի **Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան:**

«Այբ»-ի նկարչության խմբի աշակերտները մասնակցում են Դիլիջանում UWC-ի 15 ուսանողների կազմակերպած **արվեստների շաբաթին:** «Այբ»-ի աշակերտները հրավիրված էին ոչ միայն դիտելու միջոցառումը, այլև ճեպանկարներ անելու:

«Այբ»-ում պաշտոնապես բացվում է **Ucom Digital Lab** բացառիկ համակարգչային սենյակ–լաբորատորիան: 5-10-րդ դասարանների աշակերտները կկարողանան այնտեղ հմտանալ արհեստական բանականության ոլորտում, սովորել ծրագրավորում, համադրել համակարգչային տեխնիկայի հնարավորությունները արվեստի հետ:

**«Այբապատում»** ծրագրի շրջանակում «Այբ» ավագ դպրոցի 31 աշակերտ ուսուցիչների ուղեկցությամբ մեկնում է Տավուշի մարզի սահմանամերձ **Ներքին Կարմիրաղբյուր** գյուղ: Սա «Այբ»-ի աշակերտների արդեն չորրորդ այցն է սահմանամերձ գյուղեր: Այս ընթացքում գյուղաբնակ երեխաներին այբեցիների մատուցած նախկին առարկաներին՝ հայոց լեզու, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, հայոց պատմություն, ավելացել են նորերը՝ մաթեմատիկա, անգլերեն, մտածելու հմտություններ և համաշխարհային պատմություն:

Արվեստների շաբաթն ամփոփում է արվեստների խմբակների աշխատանքը ողջ տարվա ընթացքում. իրենց աշխատանքներն են ներկայացնում նկարչական, գրաֆիկական դիզայնի խմբակների աշակերտները, բեմարվեստի խմբակը ներկայացնում է «Անբան Հուռին» և «Սուտլիկ որսկանը» բեմադրությունները, ելույթ են ունենում երգչախմբերը, պարախմբերը և նվագախումբը:





«Այբ» դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ Սոնա Մարկոսյանը և Սերգեյ Սուրենյանը Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթ երկրամասում մասնակցում են **Փֆորտայի դպրոցի** հիմնադրման 475-ամյակի տոնակատարությանը: Նրանց ուղեկցում են գերմաներենի ուսուցիչներ Անուշ Լալայանը, Սրբուհի Լուլուկյանը և «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանը:

Այբեցիների արդեն 6-րդ սերունդը **վերջին զանգի** անակնկալ ներկայացում է մատուցում ծնողներին, ուսուցիչներին և ամբողջ «Այբ» համայնքին: Ու նորից 12-րդցիները փայլում են իրենց ստեղծագործ մտքով, սուր հումորով ու տաղանդով: Էլ տնօրեն, էլ ուսուցիչներ, էլ դպրոցի աշխատակազմ. ոչ ոքի չեն խնայում ու չեն շրջանցում: Մեկնարկում է **«Բարև ապագայի մասնագիտություններից»** ցուցադրություն-քննարկումը, որի մասնակիցները ծանոթանում են ապագայի տեխնոլոգիաների համաշխարհային վերջին միտումներին և հայաստանյան զարգացումներին:

«Սարգիս Մուրադյան» պատկերասրահում տեղի է ունենում «Այբ» ավագ դպրոցի աշակերտների՝ սիմվոլիզմի ոճով կատարված աշխատանքների ցուցադրությունը **««Ես». սիմվոլիզմը՝ այբեցիների աչքերով»** խորագրի ներքո:

«Այբ» դպրոցում կայանում է **աշխատանքի տոնավաճառ**՝ 27 ընկերության մասնակցությամբ, որոնցից 18-ն անցկացնում են ճանաչողական դասընթացներ: 3 ժամ շարունակ 6 լսարանում զուգահեռ տեղի են ունենում դասընթացներ, որոնց մասնակցում են «Այբ» ավագ դպրոցի 100-ից ավելի աշակերտ ու շրջանավարտ՝ նոր հմտություններ և աշխատանքային գիտելիքներ ձեռք բերելու ակնկալիքով:

Նախագծային ուսումնառության ակումբներն ամփոփում են տարին:

«Արվեստանոց» ակումբը ներկայացնում է **«Մի կտոր Երևան»** նախագիծը երևանյան գողտրիկ անկյունների ճեպանկարներով, Film Factory ակումբը՝ **«Թաքնված գանձերի հետքերով»** ֆիլմաշարը, «Տեխնոշարժ» ակումբի աշակերտները՝ «Բարև ապագայից» ցուցահանդեսը, F8 ակումբը՝ **«Համով Հայաստան»** նախագիծը:



## Հյուրեր

«Այբ» դպրոցը հյուրընկալում է Գերմանիայի կրթության և մշակույթի նախարարների համաժողովի գլխավոր քարտուղար Ուդո Միխալիկին և Հայաստանում Գերմանիայի փոխդեսպան Քլաուս Վենդելբերգերին:

Wakie-ի հիմնադիր **Հրաչիկ Աջամյանը** վարպետության դաս է անցկացնում Սիլիկոնյան հովտում ստարտափ հիմնելու գաղտնիքների մասին:

Գյոթեի ինստիտուտի հետ գործակցության շրջանակում «Այբ» դպրոցը հյուրընկալում է Հայաստանում **Գերմանիայի դեսպան Մաթիաս Քիսլերին:** Ըստ հյուրի՝ պետությունը կատարյալ դարձնելու կարևոր պայմաններից մեկը սահմանակից երկրների հետ ընկերանալն է:

«Այբ» դպրոցը հյուրընկալում է ԴԱԱԴ տեղեկատվական կենտրոնի և Գյոթեի ինստիտուտի ներկայացուցիչներին, որոնք ներկայացնում են գերմանական բուհական համակարգը, կրթական ծրագրերին մասնակցելու հնարավորություններն ու ընթացակարգը, ինչպես նաև տրամադրում կրթաթոշակների մասին տեղեկույթ:



«Այբ» դպրոցի շրջանավարտներն արդեն 2-րդ տարին անընդմեջ ընկերական մենտորության ծրագրի շրջանակում մասնակցում են ավագ դպրոցի աշակերտների հետ հանդիպումների՝ մասնագիտության և համալսարանի ընտրության թեմայով: Հյուրընկալում ենք «Նոր տեխնոլոգիաները համայնքի զարգացման գործում» ծրագրի մասնակիցներին, **Beeline Armenia-ի գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինին և Մանկական զարգացման հիմնադրամի** (Child Development Foundation) տնօրեն Լուսինե Սիմոնյանին:

«Այբ» դպրոցը հյուրընկալում է Հայաստանի չորրորդ նախագահի թեկնածու և Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան **Արմեն Սարգսյանին:**





«Այբ» դպրոց է այցելում ռուս քաղաքական և պետական գործիչ **Ալեքսանդր Վոլոշինը** և այբեցիների հետ հանդիպման ժամանակ քննարկում «Այբ»-ի Կրթության գերազանցության ազգային ծրագիրը և նախագծային ուսումնառության կարևորությունը:



«Այբ»-ը հյուրընկալում է ՀՀ պաշտպանության փոխնախարար **Դավիթ Փախչանյանին,** որը ներկայացնում է բանակի հետ կապված օրենքի փոփոխությունները:

Մեծ Բրիտանիայի Վեստմինստերյան դպրոցի տնօրեն, բանախոս **Պատրիկ Դերհամը** մեկ շաբաթ «Այբ» դպրոցում հյուրընկալվելուց և դպրոցի անցուդարձին ծանոթանալուց հետո հանդիպում է աշակերտների հետ: «Կրթության օգնությամբ կարող ենք փոխել հասարակությունը: Հայաստանն այսօր իրականացնում է այդ փոփոխությունը»,- անկեղծանում է հյուրը՝ գոհունակություն հայտնելով «Այբ»-ի աշխատանքի և գործունեության վերաբերյալ:

«Հաջողության բանաձև» ծրագրի շրջանակում «Այբ»-ը հյուրընկալում է Process Communication Model-ի որակավորված մասնագետ **Գոռ Նահապետյանին:** Նա լսարանին ներկայացնում է, թե ինչպես կարելի է հաղորդակցվել տարբեր մարդկանց հետ և ինչպես է հնարավոր խուսափել կոնֆլիկտներից. կարևորը՝ «հասկանալ, թե ում հետ ես հաղորդակցվում»:

«Հաջողության բանաձևի» շրջանակում «Այբ»-ը հյուրընկալում է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հիմնադիր և գործադիր տնօրեն Կարո Արմենին ու «Զորահ» գինեգործական ընկերության հիմնադիր Զորիկ Ղարիբյանին: Նրանք ներկայացնում են իրենց հաջողության բանաձևը և համաձայնության գալիս այն կարևոր հարցում, որ «դրամը սոսկ գործիք է, ո՛չ ավելին»:



«Հաջողության բանաձև» ծրագրի շրջանակում «Այբ» դպրոցը հյուրընկալում է Եվրամիության դեսպան **Պյոտր Սվիտալսկուն:** Դեսպանը ծանոթանանում է լիարժեք կրթություն ստանալու համար «Այբ»-ում ստեղծված հնարավորություններին, կրթաթոշակային համակարգին ու դպրոցում կիրառվող «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրին:

Հյուրընկալում ենք հայ շախմատիստ, գրոսմայստեր **Լևոն Արոնյանին** և նրա տիկնոջը՝ տնտեսագետ, շախմատիստ և «Ճամփորդ» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Արիանա Կաոիլիին: Ջերմ և անկաշկանդ զրույցում նրանք հյուրերին ներկայացնում են իրենց հաջողության բանաձևը:

## Նվաճումներ

«Այբ» դպրոցի 2017 թ. շրջանավարտ Սիմոն Զոհրաբյանն ու ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Շանթ Սարգսյանն արժանանում են ՀՀ նախագահի ամենամյա կրթական պարգևին՝ **«Լավագույն աշակերտ ՏՏ ոլորտում»:**



**«100 գաղափար Հայաստանի համար»** համահայկական երիտասարդական մրցույթի եզրափակիչ փուլում «Այբ» դպրոցի աշակերտների «Կանաչ քիմիա» ակումբի **«Այբպլաստ» նախագիծը** հաղթում է «Գյուղատնտեսական գիտություններ և բիոտեխնոլոգիաներ» անվանակարգում: Նախագիծը հետագայում Բելառուսում ներկայացվում է «100 գաղափար ԱՊՀ երկրների համար» ցուցահանդեսին:

«Այբ» դպրոցի ինժեներական ակումբն ԱՄՆ-ում կայացած **«Ռոբոտիկայի ազգային մարտահրավեր 2018»**-ում գրավում է պատվավոր 3-րդ հորիզոնականը, ինչպես նաև արժանանում մրցույթի գլխավոր հովանավոր **«Հոնդա» ընկերության՝** նորարարության համար տրվող միանգամից **երկու հատուկ մրցանակի:**

Համառ աշխատանքն ու հետևողականությունը սպասել չեն տալիս: «Այբ»-ի աշակերտները փայլուն արդյունքներով են վերադառնում ՀՀ դպրոցների առարկայական **օլիմպիադաների** հանրապետական փուլից՝ վաստակելով առաջին կարգի 3 դիպլոմ, երկրորդ կարգի 6 դիպլոմ, երրորդ կարգի 3 դիպլոմ:

ԱՄՆ խաղաղության կորպուսի աջակցությամբ կազմակերպվող անգլերեն գրավոր խոսքի **Write On!** ստեղծագործական մրցույթի միջազգային փուլում «Այբ» դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Հայկ Քասարջյանը նվաճում է **առաջին տեղը**, իսկ 10-րդ դասարանի աշակերտուհի Անի Հարությունյանը՝ երկրորդ:

Անգլերեն պոեզիայի ասմունքի **National Poetry Recitation Contest** ամենամյա մրցույթի հայաստանյան փուլում 12-րդ դասարանի աշակերտուհի Էմիլիա Սիմոնյանը գրավում է առաջին տեղը:

## Կարևոր փաստեր

Տեղի է ունենում **«Այբ» դպրոցի նոր՝ երրորդ (Գ) մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությունը:** Միջոցառմանը ներկա էին ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանը, կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, այլ բարձրաստիճան անձինք, դպրոցի բարերարներ ու աջակիցներ: «Այբ»-ի նոր մասնաշենքի կառուցումն իրականացել է «Այբ» համայնքի՝ կրթության գաղափարի շուրջ միավորված տասնյակ բարերարների ֆինանսական աջակցությամբ: 2017-2018 ուսումնական տարում «Այբ» դպրոցն անցնում է **2 արտաքին գնահատում**՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի մասնագետի և Վեստմինստերյան դպրոցի կողմից:

**Քեմբրիջի համալսարանի** գնահատման կենտրոնի ընդունելության քննությունների ատեստավորման բաժնի կողմից «Այբ» դպրոցը հայտարարվում է միջազգային քննական կենտրոն:





# ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: Մենք մեր դպրոց ընդունված բոլոր աշակերտներին **տալիս ենք «Այբ»-ում սովորելու հավասար հնարավորություններ.** «Այբ» հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որ ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից ֆինանսական պատճառով: «Այբ» ավագ դպրոցի **աշակերտների ավելի քան 70%-ն ամեն տարի «Այբ» հիմնադրամից ստանում է կրթաթոշակ** (ուսման վարձի փոխհատուցում)՝ համաձայն ֆինանսական աջակցության տրամադրման սկզբունքների և նպատակների:





# ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Այբ» դպրոցը 2017-2018 ուսումնական տարին մեկնարկում է 400 աշակերտով։** Դպրոցի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ «Այբ» ավագ դպրոցն առաջին անգամ անցկացնում է նաև հատուկ ընդունելություն 10-րդ դասարանի համար՝ միայն մարզերի դիմորդների մասնակցությամբ։ **25 աշակերտ** Հայաստանի տարբեր մարզերից ընդունվում է «Այբ» դպրոց կրթաթոշակի **100% փոխհատուցմամբ,** ինչպես նաև կացարանի և կեցության ծախսերի ապահովմամբ։

**2017-2018 ուսումնական տարում «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդի համար հանգանակվում է 94.619.156 դրամ։**

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներհոսք

| ԴՐԱՄԻ ՆԵՐՀՈՍՔ | հազար ՀՀ դրամ |
|---|---|
| Ուսման վարձ | 783220 |
| Նվիրաբերություն կրթաթոշակային ֆոնդի համար | 122520 |
| Նվիրատվություն ռոբոտիկայի լաբորատորիայի համար | 1073 |
| Առարկայական դասընթացներ | 2766 |
| Ամառային ճամբար | 5047 |
| Այլ նվիրաբերություններ | 20670 |
| Այլ մուտքեր | 17301 |
| Ընդամենը՝ ներհոսք | 952597 |

Արտահոսք

| ԴՐԱՄԻ ԱՐՏԱՀՈՍՔ | հազար ՀՀ դրամ |
|---|---|
| Հիմնական միջոցների ձեռքբերում | 15754 |
| Կոմունալ ծառայություններ և կապ | 39352 |
| Դպրոցի շենքերի և շրջակա տարածքի վերանորոգում և սպասարկում | 52357 |
| Աշխատավարձեր | 621722 |
| Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ | 7016 |
| Աշակերտների ծախսեր (սնունդ, տրանսպորտային, ծրագրային ծախսեր, լող) | 129256 |
| Ընդունելության գործընթացի ծախսեր | 1399 |
| Ավարտական միջոցառման ծախսեր | 2572 |
| Տնտեսական, ադմինիստրատիվ և ներկայացուցչական ծախսեր | 9902 |
| Մարքեթինգի , հաղորդակցության և ֆոնդահայթայթման ծախսեր | 4177 |
| ՏՀՏ սպասարկման ծառայություն | 792 |
| Անվտանգության ապահովման ծախսեր | 14280 |
| Աուդիտորական ծառայություններ | 4080 |
| Դպրոցի կառավարման համակարգի արտաքին գնահատում | 11206 |
| Առարկայական դասընթացներ | 3603 |
| Ամառային ճամբար | 3864 |
| Այլ ծախսեր | 8312 |
| Ընդամենը՝ արտահոսք | 929644 |

# ԱՋԱԿՑԻ՛Ր «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻՆ

աջակցիր

«Այբ» դպրոցը շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որ ստեղծված է աշխարհի տարբեր անկյուններում ապրող ու աշխատող մարդկանց նվիրաբերությունների շնորհիվ: Ավելի քան 200 անհատ միավորել են իրենց ջանքերը, գիտելիքները, ֆինանսական և ժամանակային ռեսուրսները, պատասխանատվությունն ու սերը՝ հանուն հայկական կրթության զարգացման, հանուն սերնդակերտման բարդ և շնորհակալ գործի: Մենք ունենք քո օգնության կարիքը «Այբ» դպրոցի հետագա զարգացման ու ընդլայնման համար: Մենք արդեն հավաքել ենք բավարար միջոցներ դպրոցի մասնաշենքերի շինարարության և համալրման, լաբորատորիաների ստեղծման և ամենաժամանակակից ուսումնական նյութերի մշակման համար: Այս ամենի շնորհիվ այսօր 352 աշակերտ ուսանում է «Այբ» դպրոցում, հաղթում ու պատվով ներկայացնում Հայաստանը միջազգային օլիմպիադաներում, ուսումը շարունակում աշխարհի լավագույն բուհերում, փոփոխություններ բերող ծրագրեր իրականացնում արդեն այսօր: Միացի՛ր «Այբ» դպրոցի ծրագրին, կատարի՛ր փոփոխություն հիմա, դարձրո՛ւ աշխարհին ավելի լավը:



**Կատարի՛ր փոփոխություն հիմա: Միացի՛ր «Այբ» դպրոցի ծրագրին և կրթության միջոցով դարձրո՛ւ աշխարհին ավելի լավը:**



## Նվիրիր $150,

և երեխաները կունենան նոր նյութեր ու սարքավորումներ գիտության իրենց դասերի համար:

## Նվիրիր $600

և հովանավորիր 1 տաղանդավոր երեխայի 1 ամսվա ուսումը «Այբ» դպրոցում:

## Նվիրիր $6000,

և մեկ աշակերտ ամբողջ տարի կսովորի «Այբ»-ում հենց քո շնորհիվ:

## Նվիրիր $50.000

և քո անունով կոչիր մեկ լսարան «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում:

## Նվիրիր $100.000

և դարձիր «Այբ» կրթական հանգույցի միջուկ-դրամագլխի բարերար՝ ստանալով արտոնություն՝ մասնակցելու որոշումների կայացմանը:

Եթե ունես «Այբ» դպրոցին աջակցելու այլ առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով, և միասին կքննարկենք ամենահարմար տարբերակը:

ՆՎԻՐԱԲԵՐԻ՛Ր

ԱՋԱԿԻՑՆԵՐ

# ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ

Դժվար է գտնել երախտագիտության և հիացմունքի խոսքեր այն մարդկանց հանդեպ, որոնց շնորհիվ «Այբ» դպրոցն արդեն վեց տարի գոյություն ունի, զարգանում է և նոր ծրագրեր իրականացնում՝ մեր երկրի ապագան կրթությամբ վերափոխելու առաքելությամբ: Մեր բարերարների ու աջակիցների թիվն անցել է երկու հարյուրի սահմանը՝ երկու հարյուր վառ անհատականություն աշխարհի տարբեր երկրներից, երկու հարյուր գաղափարակից, ովքեր ավելորդությունից չառաջացած իրենց ժամանակն ու ֆինանսական ռեսուրսները ներդրել են ի շահ հայկական կրթության մրցունակության բարձրացման, ի շահ ուսյալ ու առաջինի սերունդների կերտման: Երկու հարյուր մարդ հավատացել է «Այբ»-ի նպատակներին, երկու հարյուր մարդ կիսել է մեզ հետ մեր գործի հանդեպ նվիրումն ու սերը: Մեր ծրագրերի հաջողության հիմքը հենց այդ երկու հարյուր անձանց արժեքների, փորձառության, հնարավորությունների, պատասխանատվության այն ընդհանուր հզոր ազդեցությունն է, որի շնորհիվ անգամ անիրատեսական թվացող նպատակները դառնում են շոշափելի:






## «Այբ» դպրոցի «Միջուկ-դրամագլխի» բարերարներ

Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան, Հայաստան / Ռուսաստան
Աշոտ Թումասյան, Ռուսաստան
Աշոտ Մկրտչյան, Ռուսաստան
Արամ Փախչանյան և Յուլիա Դանիելյան, Հայաստան / Ռուսաստան
Արթուր Ալավերդյան, Ռուսաստան
Արմեն Մելքումյան, Հայաստան
Արմեն Շահինյան, Ռուսաստան
Արսեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ, Հայաստան / Կիպրոս
Արտեմ Կոնստանդյան, Ռուսաստան
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Դավիթ և Ալյոնա Յաններ, ԱՄՆ, Ռուսաստան
Կարեն և Մարինե Մուսայելյաններ, ԱՄՆ
Կարո Սարգսյան, Ռուսաստան
Ղարիբ Մովսիսյան, Ռուսաստան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան, Ռուսաստան
Սարգիս Բադալյան, Ռուսաստան
Սերգեյ Համբարձումյան, Ռուսաստան
Վարդան Բաբիկյան, Ռուսաստան

## «Այբ» դպրոցի կրթաթոշակային ֆոնդի բարերարներ

Ալբերտ Եգանյան, Ռուսաստան
Ալեքսանդր Մուրադյան, Շվեյցարիա
Ալֆրեդ Եսայան, ԱՄՆ
Անահիտ Ամատունի, Ռուսաստան
Անաստասիա Տյուրինա, Ռուսաստան
Աննա Բարխուդարյան
Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան, Հայաստան / Ռուսաստան
Աշոտ Թումասյան, Հայաստան
Աշոտ Մկրտչյան, Ռուսաստան
Աշոտ և Մարինա Դանիելյաններ, Ռուսաստան
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան, Ռուսաստան / Հայաստան
Ավետիք Քերոբյան, Ռուսաստան
Արա Հոմերի Աբրահամյան և Քրիստինե Ալմազյան, Գերմանիա
Արամ Արամյան, Հայաստան
Արամ Երիցյան, Ռուսաստան
Արթուր Բերդ, ԱՄՆ/Ֆրանսիա
Արթուր Դերոյան, Ռուսաստան
Արթուր Ջանիբեկյան, Ռուսաստան
Արթուր Ջավադյան, Հայաստան
Արմեն Արսենյան, Հայաստան / Կիպրոս
Արմեն Արսենյան, Հայաստան / Կիպրոս
Արմեն Բալդրյան
Արմեն Շահինյան, Ռուսաստան
Արմեն Ուզունյան, Ռուսաստան
Արսեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ, Հայաստան / Կիպրոս
Արսեն Ղազարյան, Հայաստան
Արտակ Հովհաննիսյան, Ռուսաստան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ, Ռուսաստան

Արտեմ Կոնստանդյան, Ռուսաստան
Արտյոմ Գրիգորյան, Հայաստան
Գայանե Արամյան, Ռուսաստան
Գարեգին Թոսունյան, Ռուսաստան
Գարիկ Մարտիրոսյան, Ռուսաստան
Գոռ Նահապետյան, Ռուսաստան
Գորան Բրեգովիչ, Ֆրանսիա
Գրիգորի Դարչիև, Ռուսաստան
Գևորգ Սարգսյան, Ռուսաստան
Դավիթ Դավիդյանց, Ռուսաստան
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Դավիթ և Ալյոնա Յաններ, ԱՄՆ / Ռուսաստան
Դմիտրի Զույկով, Ռուսաստան
Էմիլ Արզանգուլյան, Ռուսաստան
Իգոր Խալաթյան, ԱՄՆ
Իրմա Վարդանյան, Հայաստան
Լևոն Գրիգորյան
Լևոն Ղազարյան, ԱՄՆ
Լևոն Մազմանյան, Ռուսաստան
Կարեն և Լիլիաննա Մխիթարյաններ, Շվեյցարիա
Կարեն և Մարինե Մուսայելյաններ, ԱՄՆ
Կարեն և Ռուզաննա Գրիգորյաններ, Կիպրոս
Կարո Արմեն, ԱՄՆ
Կարո Սարգսյան, Ռուսաստան
Կարոլին Մուգար, ԱՄՆ
Կոնստանտին, Գևորգ և Սերգեյ Թևոսովներ, Ռուսաստան
Կորյուն Մկրտչյան, Հայաստան
Հակոբ Մոմջյան, Իսրայել
Հայկ Ալեքսանյան, Ռուսաստան
Հայկ Սարգսյան, Ռուսաստան
Հայկ, Կարո և Արաքսի Թումաջանյան, ԱՄՆ
Հովնան Լալայան, Ռուսաստան
Ղարիբ Մովսիսյան, Ռուսաստան
Մարիաննա Մկրտչյան
Մարլեն Մանասով, Ռուսաստան
Մարտիրոս Մինասյան, Հայաստան / Կիպրոս
Մերուժան Սարգսյան, Հայաստան / Կիպրոս
Միխայիլ Տիխոնով, Ռուսաստան
Մուշեղ Մամիկոնյան, Ռուսաստան
Յուլիա Դանիելյան, Ռուսաստան
Նազարեթ և Նիլա Ֆըսթըքճյաններ, ԱՄՆ
Նորայր Գյուզալյան, Ռուսաստան
Շահեն Ծառուկյան, Հայաստան
Պարգև Վիրաբյան, Հայաստան
Պրոֆ. Յան Շի և Սիլվա Յան, Ռուսաստան / Թայվան
Ջեյմս Թուֆենկյան, ԱՄՆ
Ռալֆ և Արմիկ Յիրիկյաններ, Հայաստան
Ռուբեն Գևորգյան, Ռուսաստան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան, Ռուսաստան
Ռուբեն Ջաղինյան, Հայաստան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան, Ռուսաստան
Սեդրակ Քոչարյան
Սերգեյ Խաչատրյան, Ռուսաստան
Սերգեյ Յուշին և Օլգա Ժուրավսկայա, ԱՄՆ
Վազգեն և Սոսի Սեդրակյաններ, ԱՄՆ
Վահան Աբգարյան, Ռուսաստան
Վահե Մելքոնյան, Հայաստան
Վարդան Բաբիկյան, Ռուսաստան
Վիգեն Սարգսյան, Հայաստան
Վիկտոր Ակուլյան, Ռուսաստան
Վիոլետ Բարխուդարյան
Տիգրան Մինասյան, Նունե Սիմոնյան, Հայաստան
Տիգրան Ուզունյան, Ռուսաստան
«Աերոսիբ» ընկերություն, Ռուսաստան
«Ազադ» հիմնադրամ, Շվեյցարիա
«Բարրի» ՍՊԸ, Հայաստան
«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ, Հայաստան
«Զիգզագ» ՍՊԸ, Հայաստան
«Կոսմոտեկա» ընկերություն, Ռուսաստան
«Պողոսյան» հիմնադրամ, Բելգիա
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ, Հայաստան
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, Հայաստան

## «Այբ» դպրոցի բարերարներ

Ալեքսանդր Մուրադյան, Շվեյցարիա
Ալեքսանդր Պանկով, Ռուսաստան
Ալֆրեդ Եսայան, ԱՄՆ
Ահարոն Մելքոնյան, Ռուսաստան
Աղասի Դարբինյան, Հայաստան
Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան, Հայաստան / Ռուսաստան
Աշոտ Մկրտչյան, Ռուսաստան
Ասպետ և Ափդա Փոզարյան, ԱՄՆ
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան, Ռուսաստան / Հայաստան
Արա Հոմերի Աբրահամյան և Քրիստինե Ալմազյան, Գերմանիա
Արամ Արամյան, Հայաստան
Արամ Կայֆաջյան, Հայաստան
Արամ Մնացականյան, Հայաստան
Արեգ Զաքոյան, Ռուսաստան
Արթուր Ամրոյան, Հայաստան
Արթուր Արզումանով, Ռուսաստան
Արթուր Չիպկինյան և Սոնա Կոշեցյան, Հայաստան
Արթուր Ջանիբեկյան, Ռուսաստան
Արթուր Ջավադյան, Հայաստան
Արթուր Վանեցյան, Հայաստան
Արթուր Օսիկյան, Հայաստան
Արմեն Խաչատրյան, Հայաստան
Արսեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ, Հայաստան / Կիպրոս
Արսեն Գալստյան, Ռուսաստան
Արսեն Թառոյան, Հայաստան
Արսեն Ղազարյան | «Ապավեն» ՍՊԸ, Հայաստան
Արտակ Գյուրջինյան, Հայաստան

Արտակ Հովհաննիսյան, Ռուսաստան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ, Ռուսաստան
Արտավազդ Սոխիկյան, Հայաստան
Բենո և Արսինե Շիրվանյան, ԱՄՆ
Գագիկ Զաքարյան, Հայաստան
Գագիկ Սահակյան, Հայաստան
Գարիկ Մարտիրոսյան, Ռուսաստան
Գեղամ Վարդանյան և Նելլի Սեմերջյան, Հայաստան
Գրեգ Շիրակյան, ԱՄՆ
Գրիգոր Մելքոնյան, Ռուսաստան
Գրիգորի Արսենյան, Հայաստան
Գևորգ և Արևիկ Գիզիրյաններ, Հայաստան
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Դավիթ և Ալյոնա Յաններ, ԱՄՆ / Ռուսաստան
Էդգար Գալստյան, Հայաստան
Էդուարդ և Նենսի Գյուլեսերյաններ, ԱՄՆ
Էմիլ Արզանգուլյան, Ռուսաստան
Էրիկ Մկրտչյան, Հայաստան
Թամար Հաջյան | Դավիթ և Աննա Պաղտասարյան Թրաստ, ԱՄՆ
Իշխան Մխիթարյան, Հայաստան
Լուիս Սիմոն Մանուկյան, ԱՄՆ
Լևոն Խալաթյան, Հայաստան
Խորեն Ոսկանյան, Հայաստան
Կարեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ, Հայաստան
Կարեն Ավագումյան, Ռուսաստան
Կարեն Մովսիսյան, Ռուսաստան
Կարո Սարգսյան, Ռուսաստան
Կարոլինա Շիրոյան, ԱՄՆ
Կոնստանտին, Գևորգ և Սերգեյ Թևոսովներ, Ռուսաստան
Հակոբ և Սեդա Գևրեկյաններ, Ֆրանսիա
Հովհաննես Գրիգորյան, Հայաստան
Հովսեփ Ներսիսյան, Հայաստան
Հրայր և Զարուգ Կաբակյաններ, ԱՄՆ
Մանուկ Հերգնյան, Հայաստան
Մանվել Ուրումյան, Ռուսաստան
Մարտիրոս Մինասյան, Հայաստան / Կիպրոս
Մեսրոպ քհն. Արամյան, Հայաստան
Մեսրոպ քհն. Հովսեպյան, ԱՄՆ
Միխայիլ Ուրյասով, Ռուսաստան
Միսակ Զաքարյան, Ռուսաստան / Հայաստան
Նաիրա Մանուկյան, Հայաստան
Նիկոլայ Սմիրնով, ԱՄՆ
Նորայր Գյուզալյան, Ռուսաստան
Նուբար և Աննա Աֆեյաններ, ԱՄՆ
Շահեն Ծառուկյան, Հայաստան
Պրոֆ. Յան Շի և Սիլվա Յան, Ռուսաստան / Թայվան
Ջեյմս և Փրիսիլա  Ալթունյաններ, ԱՄՆ
Ռուբեն Գևորգյան, Ռուսաստան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան, Ռուսաստան
Սամվել Դովլաթյան, Հայաստան
Սամվել Սամվելյան, Հայաստան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան, Ռուսաստան

Սարգիս Թարվերդյան, Հայաստան
Սարգիս Նուրյան | Հայ ոսկերչական միջազգային միություն, ԱՄՆ
Սերգեյ Խաչատրյան, Ռուսաստան
Սերգեյ Յուշին և Օլգա Ժուրավսկայա, ԱՄՆ
Սինան Սինանյան, ԱՄՆ
Սևան և Քլարիս Կաբակյաններ, Հայաստան
Վազգեն Գևորգյան, Ռուսաստան
Վահան Աբգարյան, Ռուսաստան
Վահե Կուզոյան, ԱՄՆ
Վարդան Բաբիկյան, Ռուսաստան
Վարդան Մելիքյան, Հայաստան
Վարդան և Կարինե Բալայաններ, Հայաստան
Վարուժան Մուրադյան, Հայաստան
Վիկտոր Ծառուկյան և Ջուդիթ Սարյան, ԱՄՆ
Տաթևիկ Խալափյան, Հայաստան
Տիգրան Հարությունյան, Հայաստան
Տիգրան Մինասյան, Հայաստան
Րաֆֆի Դուդակլյան, Հայաստան
Քնար Բաբայան | Վիգեն Բաբայան բարեգործական հիմնադրամ, ԱՄՆ
Օնիկ Ազնաուրյան, Ռուսաստան
5165 ակումբ, Հայաստան
«ABBYY» ընկերություն, Ռուսաստան
«Granatus Ventures» ընկերություն, Հայաստան
«Այբ»-ի բարերարների համայնք
«Այբ»-ի ծնողների համայնք
«Զիգզագ» ՍՊԸ, Հայաստան
«Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ, Հայաստան
«Լույս» հիմնադրամ, Հայաստան
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, Հայաստան

## «Այբ» դպրոցի մասի հովանավորներ

Ալեքսանդր Մուրադյան, Շվեյցարիա
Աշոտ և Մարինա Դանիելյաններ, Ռուսաստան
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան, Ռուսաստան / Հայաստան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ , Ռուսաստան
Գոռ Նահապետյան, Ռուսաստան
Գրիգոր Մելքոնյան, Ռուսաստան
Դավիթ և Աննա Պաղտասարյան Թրաստ, ԱՄՆ
Էմիլ Արզանգուլյան, Ռուսաստան
Լևոն Համդիյան, Ռուսաստան
Լևոն և Կլաուդիա Նազարյաններ, ԱՄՆ
Կարեն և Ռուզաննա Գրիգորյաններ, Կիպրոս
Կարո Արմեն, ԱՄՆ
Կոնստանտին, Գևորգ և Սերգեյ Թևոսովներ, Ռուսաստան
Մարտիրոս Մինասյան, Հայաստան / Կիպրոս
Պրոֆ. Յան Շի և Սիլվա Յան, Ռուսաստան / Թայվան
Ռալֆ և Արմիկ Յիրիկյաններ, Հայաստան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան, Ռուսաստան
Վարդան Բաբիկյան, Ռուսաստան

Տիգրան Հարությունյան, Հայաստան
Ռաֆֆի և Նինա Ֆըսթըգճյաններ, ԱՄՆ
«Ucom» ընկերություն, Հայաստան
«Այբ» համայնք
«Ապավեն» ՍՊԸ, Հայաստան
«Արմսվիսբանկ» ՓԲԸ, Հայաստան
«Արցախբանկ» ՓԲԸ , Հայաստան
«Զիգզագ» ՍՊԸ, Հայաստան
«Լույս» հիմնադրամ, Հայաստան
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ, Հայաստան
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, Հայաստան
Հայաստանի բանկերի միություն
Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀԲԸՄ Շվեյցարիայի մասնաճյուղ
Մելգոնյան կրթական հաստատության ընկերներ, Կիպրոս, Շվեյցարիա, Ռուսաստան, Հայաստան

## Սրբոց Թարգմանչաց եկեղեցու բարերարներ

Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան, Հայաստան / Ռուսաստան
Աշոտ Մկրտչյան, Ռուսաստան
Արա Մկրտչյան, Հայաստան
Արամ Երիցյան, Ռուսաստան
Արեգ Չաքրյան, Ռուսաստան
Արթուր Դերոյան, Ռուսաստան
Արթուր Ջանիբեկյան, Ռուսաստան
Արմեն Կազարով, Ռուսաստան
Արտակ Հովհաննիսյան, Ռուսաստան
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Լևոն Մազմանյան, Ռուսաստան
Կարո Սարգսյան, Ռուսաստան
Հովհաննես Ջիվանյան, Հայաստան
Մուշեղ Մամիկոնյան, Ռուսաստան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան, Ռուսաստան
Սամվել Սամվելյան, Հայաստան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան, Ռուսաստան
Սերգեյ Համբարձումյան, Ռուսաստան
Քերոբ Միքայելյան, Հայաստան

## «Այբ» դպրոցի նպատակային դրամագլխի բարերար

Սիրուն Գյուրեղյան Թրաստ, ԱՄՆ

## Նվիրատուներ լավագույն բուհերի ուսանողների կրթաթոշակների համար

Ադամ Կաբլանյան, ԱՄՆ
Ալֆրեդ Եսայան, ԱՄՆ
Անուշ Առուստամյան, Ռուսաստան
Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան, Հայաստան / Ռուսաստան
Աշոտ Թումասյան, Ռուսաստան
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան, Ռուսաստան / Հայաստան
Արամ Փախչանյան և Յուլիա Դանիելյան, Հայաստան / Ռուսաստան
Արթուր Բերդ, ԱՄՆ / Ֆրանսիա
Արթուր Մադաթյան
Արմեն Խաչատրյան, Հայաստան
Արմեն Կազարով, Ռուսաստան
Արմեն Միքաելյան
Արմեն Շահինյան, Ռուսաստան
Արմեն Փանոսյան, ԱՄՆ
Արսեն Աղաջանյան, Հայաստան / Կիպրոս
Արտակ Հովհաննիսյան, Ռուսաստան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ, Ռուսաստան
Գարի Մեքիկյան, ԱՄՆ
Գրիգորի Մազմանյանց, Ռուսաստան
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Դավիթ և Այրնա Յաններ, ԱՄՆ / Ռուսաստան
Լևոն Ղազարյան, ԱՄՆ
Լևոն Ֆրնջիբաշյան, ԱՄՆ
Կարեն Չալտիկյան, ԱՄՆ
Կարեն և Մարինե Մուսայելյաններ, ԱՄՆ
Կարո Արմեն, ԱՄՆ
Կարո Սարգսյան, Ռուսաստան
Հարութ Աջարյան, ԱՄՆ
Հրայր Նալբանդյան, ԱՄՆ
Մանուկ Հերգնյան, Հայաստան
Մեսրոպ քհն. Արամյան, Հայաստան
Նարեկ Թովմասյան, ԱՄՆ
Շանթ Հովնանյան, ԱՄՆ
Պաոլո Փիրջանյան, ԱՄՆ
Ռոն Փապաս, ԱՄՆ
Ռուբեն Սիմոնյան, ԱՄՆ
Սերգեյ Համբարձումյան, Ռուսաստան
Սերգեյ Ստեփանյանց, ԱՄՆ
Սյուզի Հաբեշյան, ԱՄՆ
Վարուժ Բեդիկյան, ԱՄՆ

## «Այբ» դպրոցի ոչ ֆինանսական նվիրատուներ

«EPAM Systems» ընկերություն, Ռուսաստան
«Jur Jur» ՍՊԸ, Հայաստան
«Twiga Communication Group» ընկերություն, Ռուսաստան
Արմենակ Խաչատրյան և Մարինա Վարդանյան | Բաղրամյանի թռչնաֆաբրիկա, Հայաստան
Արտակ Չիբուխչյան, Հայաստան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ, Ռուսաստան
Լևոն Աֆեյան | «Առոռ Սեյլս» ՍՊԸ, Հայաստան
Խորեն Քոթանջյան | «Թերմորոս-Ար» ՍՊԸ, Հայաստան
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամ, Հայաստան
ՎիվաՍել-ՄՏՍ ընկերություն, Հայաստան
«Հայաստան ծառատունկ» ծրագիր, Հայաստան
«Փայլ» ընկերություն, Ռուսաստան
Արա Պետրոսյան | «Ար և Ար Դիզայն Քնստրաքշն» ՍՊԸ, Հայաստան
Երևանի քաղաքապետարան

## Փաբլաբի բարերարներ

ՎիվաՍել-ՄՏՍ ընկերություն, Հայաստան
ՀՀ Կենտրոնական բանկ, Հայաստան

## Գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի բարերար

Արմեն Մելքումյան, Հայաստան

## «ԱյբԼաբ» ծրագրի նվիրատուներ

Արթուր Բերդ, ԱՄՆ / Ֆրանսիա
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Կարո Սարգսյան, Ռուսաստան

## Կանոնադրական նպատակների և այլ ծրագրերի նվիրատուներ

Աշոտ Ասլանյան, Հայաստան / Ռուսաստան
Արթուր Բերդ, ԱՄՆ / Ֆրանսիա
Արմեն Խաչատրյան, Հայաստան
Արմինե Առուստամյան, ԱՄՆ
Արսեն Աղաջանյան, Հայաստան / Կիպրոս
Արսեն Ղազարյան, Հայաստան
Դավիթ Փախչանյան, Ռուսաստան
Դավիթ և Այլոնա Յաններ, ԱՄՆ / Ռուսաստան
Թալին Ավագյան, Շվեյցարիա
Մարտիրոս Մինասյան, Հայաստան / Կիպրոս
Ռուբեն Հարությունյան, Ռուսաստան
Սահակ Պետրոսյան | «Goldman Sachs Asset» ընկերություն, ԱՄՆ
Վարդան Սիրմաքեշ, Շվեյցարիա
«Դար» հիմնադրամ, Հայաստան
«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ, Հայաստան

## Դպրոցական մրցույթների նվիրատուներ

«Bzzz Armenian Honey» ընկերություն, Հայաստան
«Creative Educational Technologies» ընկերություն, Հայաստան
Արամ Փախչանյան, Հայաստան / Ռուսաստան
ՀՀ-ում ՌԴ դեսպանության առընթեր «Ռոսսոտրուդնիչեստվո» ներկայացուցչություն
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Հայաստան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան, Ռուսաստան
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, Հայաստան

**«Այբ» դպրոց**
Թբիլիսյան խճ. 11/11
Երևան 0052, Հայաստանի
Հանրապետություն

094-54-64-98
096-500-456

www.**aybschool.**am

facebook.com/AybSchool
twitter.com/aybschool
instagram.com/aybschool
youtube.com/aybschool

design by
FACTORY production



www.aybschool.am